# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Կարգավիճակ | Առաջարկության բովանդակությունը | Կցված փաստաթղթեր | Եզրակացություն | Դրույթ |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | առաջարկը ներկայացվել է էլ" փոստով<br>04.12.2025 17:36:25 | Քննարկման փուլում է | 1. Գործող համակարգով անապահովության սահմանային միավորը 2026 թվականի համար դարձյալ 28.00 է սահմանվո՞ւմ:<br>2. Գործող համակարգով մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը փաստագրվածները կշարունակե՞ն մինչև իրենց հաջորդ տարվա հերթական փաստագրումը ընտանեկան, | | **Առաջին առաջարկն ընդունվել է ի գիտություն:**<br>Նախագծով 28.00 սահմանային միավորի փոփոխություն 2026 թվականի համար չի նախատեսվում:<br>**Երկրորդ առաջարկն ընդունվել է ի գիտություն:**<br>Նախագծով | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | սոցիալական նպաստ ստանալ, թե հուլիսի մեկից նոր համակարգով նորից պետք է անցնեն:<br>3. Եթե ընտանիքում աշխատունակ անձ չկա ու խնամառության ինդեքսը սահմանվում է 100, որքա՞ն հավելում է տրվում: | | առաջարկվում է անապահովության գնահատման նոր համակարգն ամբողջ մարզերում ներդնել 2026 թվականի հուլիսի 1-ից, իսկ 2026 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքների նպաստի վճարումները շարունակվում են մինչև ընտանիքի սոցիալական | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գնահատման համակարգում հաջորդ հաշվառման (փաստագրման) ամիսը ներառյալ: Մինչև հաջորդ փաստագրման ամիսը լրանալը գնահատման նոր համակարգով դիմում ներկայացնելու սահմանափակումներ նախագծով նախատեսված չեն:<br><br>**Երրորդ առաջարկն ընդունվել է ի գիտություն:** Բարձր և առավելագույն խոցելիություն ունեցող ընտանիքների համար անապահովության | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | նպաստի ամսական հիմնական չափին գումարվում է հավելում՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի նկատմամբ եղած պակասուրդի չափով՝ ընտանիքի յուրաքանչյուր հաշվարկային անդամի համար: | |
| 2 | առաջարկը ներկայացվել է էլ" փոստով 04.12.2025 17:30:05 | | Նոր համակարգով 2 հոգանոց ընտանիքի դեպքում էլեկտրաէներգիայի ու գազի ամսական ինչքա՞ն ծախսն է համարվում առավելագույն չափ,որը կարող է համարվել բացառող գործոն: | | **Առաջարկն ընդունվել է ի գիտություն:** ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշման N 1 հավելվածի 39-րդ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կետով Էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման սահմանաչափերը սահմանված են որպես անապահովության հիմքով սոցիալական աջակցության տրամադրումը բացառող գործոններ, իսկ նույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված են սահմանաչափերը գերազանցելու հաշվարկի բանաձևերը՝ համաձայն որոնց 2 անդամներից բաղկացած | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ընտանիքների դեպքում՝<br><br>1. տվյալ տարվա ամառային ամիսների ընթացքում ընտանիքի կողմից էլեկտրաէներգիայի սպառման սահմանաչափը կազմում է 130 կՎտ.ժամ,<br>2. նախորդող 12 ամիսների ընթացքում ընտանիքի կողմից բնական գազի սպառման միջին ամսական սահմանաչափը | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կազմում է 820 խոր. մ.: | |
| 3 | Սաթենիկ Վարդանյան<br>20.11.2025 10:55:11 | | **Առաջարկ**<br>«Քննարկվող նախագծում ամբողջությամբ աջակցում ենք այն դրույթին, ըստ որի՝ ընտանիքի աշխատունակ, אך չաշխատող 18–22 տարեկան հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող անձանց նկատմամբ վերագրում չի կատարվելու: Այս մոտեցումը կարևոր է մի քանի պատճառով.<br>□ Նախ՝ այս տարիքային խմբի երիտասարդները դեռևս գտնվում են կրթական գործընթացի | | **Առաջարկն ընդունվել է ի գիտություն:** ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշման N 1 հավելվածի 37-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն եկամտի վերագրում չի կատարվում, եթե ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամը 18 տարեկանից մինչև 22 տարեկանը ներառյալ առկա ուսուցմամբ սովորող է, որի մեջ դիտարկվում է նաև և բարձրագույն ուսումնական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ավարտական և որոշիչ փուլում, ու նրանցից աշխատանքային համարժեք ներգրավվածություն ակնկալելը ոչ միշտ է իրատեսական:<br>□ Երկրորդ՝ ուսման և աշխատանքի համատեղումը տվյալ խմբի համար հատկապես բարդ է, ինչը կարող է բացասաբար ազդել կրթության որակի վրա և մեծացնել կրթությունը կես ճանապարհին թողնելու ռիսկը:<br>□ Երրորդ՝ այս փոփոխությունը հնարավորություն կտա սոցիալապես | | ուսումնական հաստատություններում սովորողներին, իսկ նախագծով կնախատեսվի նաև վերագրում չկատարել հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողներին: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | խոցելի ընտանիքների երիտասարդ անդամներին կենտրոնանալ կրթության վրա՝ առանց նպաստի կորուստից զգուշանալու, ինչը երկարաժամկետում կնպաստի նրանց մրցունակության բարձրացմանը և աշխատաշուկա ավելի հաջող ինտեգրվելու հնարավորությանը։<br><br>Ուստի առաջարկում ենք նախագծում ամրապնդել այս դրույթը՝ այն դիտարկելով որպես կրթական շարունակականության և սոցիալական պաշտպանության | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | համակարգի կարևոր բաղադրիչ:» | | | |
| 4 | Անի Նիկողոսյան<br>19.11.2025<br>21:30:08 | | 18-ից մինչև 22 տարեկան՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող չաշխատողներին վերագրում չկատարելու առաջարկը շատ կարևոր է և ուղղված է կրթության խրախուսմանը և երիտասարդների վրա սոցիալական ճնշման թեթևացմանը:<br><br>Արդյոք նույն մոտեցումը պետք է կիրառել նաև միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների նկատմամբ: Հաճախ այս տարիքի ուսանողները նույնպես ունեն ֆինանսական դժվարություններ՝ ուսման և ընտանեկան հոգսերը | | **Առաջարկն ընդունվել է ի գիտություն:** ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշման N 1 հավելվածի 37-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն եկամտի վերագրում չի կատարվում, եթե ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամը 18 տարեկանից մինչև 22 տարեկանը ներառյալ առկա ուսուցմամբ սովորող է, որի մեջ դիտարկվում է նաև և բարձրագույն ուսումնական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հոգալու, իսկ վերագրումը կարող է հանգեցնել նպաստից զրկվելուն: | | մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողներին, իսկ նախագծով կնախատեսվի նաև վերագրում չկատարել հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողներին: | |